

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Մարտ ամսոյ սկիզբները երկու հանրագրութիւններ պատրաստուեցան ներկայացուելու համար Նորին Վեհափառութիւն Հիւսէյն Թագաւորին: Այդ հանրագրութիւններէն մին ստորագրուած էր Յորդանան գտնուող 28 Միաբան հայերու եւ Սարկաւազաց 22 ին կողմէ: Իսկ միւսը աւելի քան 2000 չափահաս հայերու կողմէ երուսաղէմէն, Ամմանէն եւ շրջականերէն: Միաբանութեան ղեկավարներէն մէջ նախ շնորհակալութիւն կը յայտնուէր որ Նորին Վեհափառութիւնը «կը վերանկատէ խնդիրը Տիրան Արքայանին, զոր մենք 1957 Մարտ 20 ին պատրիարք ընտրեցինք, մեր Սահմանադրութեան եւ կանոններուն համաձայն. աւանդական եղանակաւ, գաղտնի քուէարկութեամբ եւ ազատօրէն, մեր Միաբանական Ընդհ. Ժողովոյ հանդիսաւոր նիստին մէջ»: Եւ խնդրանք կ'ըլլար որ Տիրան Արքայան մնար երկրին մէջ:

Իսկ Ժողովրդային հանրագրութեան մէջ ի միջի այլոց կ'ըսուէր որ «Տիրան Արքեպիսկոպոս, որ պատրիարք ընտրուած է, մեզի համար վստահելի անձ մըն է... ան համայն հայութեան բարձր համարումը վաշխող հոգեւորական մըն է. հմուտ է մեր կրօնքին եւ կ'աշխատի Ժողովուրդի օգտին համար: Ան հակառակ է կործանարար ուժերու որոնց նպատակն է կրօնքն ու եկեղեցին քայքայել: Ուստի կը խնդրենք Ձեր Վեհափառութենէն նկատի առնել Տիրան Արքայանի խնդիրը, որպէսզի ան մնայ հովիւ իր հօտին եւ պահապանը Ս. Աթոռոյս կանոններուն եւ անկախութեան»:

Այս հանրագրութիւնները անձամբ պալատ յանձնուեցան Լուսարարապետ Գեր. Տ. Շնորհք Եպս. ի կողմէ Մարտ 20 ին: Իսկ անոնց լուսահանեալ պատճէնները յանձնուեցան Վարչապետարան, Ներքին Գործոց, Արտաքին Գործոց եւ Պաշտպանութեան Նախարարներուն:

Մարտ 25 ին, Տիրան Արքայան եւ Սուրէն Արքայան երուսաղէմի Կառավարիչին հրաւերով Կառավարչատուն գացին, ուր

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ - ԲԵՄԱԿԱՆՔ

Շք. 1 Մարտին, Ս. Թէոդորա զօրավարի տօնին առթիւ, Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայրա. վանքի Ս. Թորոս եկեղեցւոյն մէջ:

Նոյն օրը կէսօրէ վերջ, յաջորդ օրուան Արտաքին Կիւսկիի առթիւ, Գեր. Տ. Սուրէն Եպս. Քէմհանեանի զխաւորութեամբ, Միաբան Հայրեր «Հրաշափառ»ով մուտք գործեցին Ս. Յարութեան Տաճար, ուր մեր վերնամաստան մէջ պաշտուեցան երեկոյեան ժամերգութիւն եւ Նախատօնակ: Ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց այցելութեան հանդիսաւոր թափօր Տաճարէն ներս, Թափօրապետն էր Հոգ. Տ. Կիրեղ վրդ. Գաբրիէան:

Յաջորդ օրը, Ս. Յարութեան Տաճարի մեր վերնամաստան մէջ պաշտուած առաւօտեան ժամերգութենէն եւ մատուցուած Ս. Պատարագէն ետք կատարուեցաւ երրադարձ մեծահանդէս թափօր Քրիստոսի Ս. Գերեզմանին եւ ապա Պատ. Նատեղւոյն շուրջ՝ Նախազանութեամբ Գեր. Տ. Սուրէն Եպս. Քէմհանեանի:

6 Մարտ Հինգշաբթի իրիկուն, Մայր Տաճարին մէջ կատարուած Մեծ Պահոց «Հսկում»-ի արարողութեան ընթացքին Հոգ. Տ. Թորգոմ վրդ. Մանուկեան քարոզեց մեղքի ու ապաշխարութեան խորհուրդին շուրջ:

Քաղաքիս Վսեմ. Կառավարիչը պաշտօնապէս յայտնեց թէ Տիրան Արքայանի արարման հրամանը յետս կոչուած է: Միաժամանակ հաւաստիք տուաւ վանական իշխանութեան՝ թէ Ժողովուրդին մէջ կարգ ու կանոնի եւ խաղաղութեան պահպանման համար Կառավարութիւնը հարկ եղած միջոցները ձեռք պիտի առնէ, երբ պէտք ըլլայ: Արքայանները վերադարձան Վանք՝ գոհունակ սրտով, Կառավարիչին կողմէ ցուցուած բարեացակամ տրամադրութեան համար:

Տիրան Արքայանի տարագրման հրամանին հետեւանքով յառաջ եկած անորոշութիւնը Պատրիարքարանի վարչութեան նկատմամբ Կառավարութեան ղիրքին մասին, տակաւին կը մնայ:

Սակայն կը յուսանք որ այս անորոշութիւնն ալ վերջ պիտի գտնէ մօտիկ ապագային:

ԴԻԻԱՆ Ս. ԱԹՈՒՌՑ